ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը - Արթուր Մելիքյան.

2. Զբաղեցրած պաշտոնը - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետի տեղակալ.

3. Գործուղման վայրը և ժամկետները – Վրաստան (ք. Թբիլիսի), 2024 թվականի մարտի 3-8-ը

4. Հրավիրող կողմը – ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)

5. Գործուղման նպատակը - «Տնտեսական համագործակցության կազմակերպության (ՏՀԿ) երկրներում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտի (PPR) վերացման համար PPR մոնիթորինգ և գնահատման գործիքի ներդրում» ՏՀԿ տարածաշրջանային ցանցային հանդիպմանը մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները (հարցերը) – Մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության վերացման և երկիրը հիվանդությունից ազատ ճանաչելու համար դոսյեի պատրաստելու, հայտ ներկայացնելու, պահանջվող տեղեկատվության տրամադրելու, ինչպես նաև իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ քննարկումներ, այլ երկրների փորձի ներկայացում և քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները – Քննարկվեցին մասնակից երկրների (Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ղրղզստան, Ղազախստան, Ադրբեջան) կողմից ներկայացված ելույթները և երկրների փորձը մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության դեմ պայքարի և կանխարգելման, իրականացվող միջոցառումները և դրանց ներդաշնակեցումը հարևան երկրների հետ: Քննարկվեց երկրների մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճամոնիթորինգի պլանի կազմում և իրականացումը, ինչպես նաև դոսյեի պատրաստման փուլերը: Ներկայացվեցին նաև FAO-ի և OIE-ի փորձագետների ելույթներ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – FAO-ի փորձագետների հետ քննարկվեց ՀՀ-ում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության բռնկման և վերացման վերաբերյալ

Վրացական կողմի հետ սիմուլացիոն-ուսուցողական վարժանք իրականացնելու հնարավորությունը: Քննարկվեց FAO-ի կողմից վերոնշյալ միջոցառմանը աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները - Կախված արդյունքներից՝ դոսյեի ներկայացումը FAO նախնական առաջարկվեց ներկայացնել 2026-2027 թվականներին:

Գործուղվող՝ Արթուր Մելիքյան 12.03.2024 թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)